ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

16 նոյեմբերի 2022 թ. թիվ 16 /1807/

31. ՀՀ ԳԱԱ Հ.Բունիաթյանի անվան կենսաքիմիայի և ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտների միավորման և ՀՀ ԳԱԱ Գ.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների և ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտների միավորման նպատակահարմարության վերաբերյալ

Հաշվի առնելով ՀՀ ԳԱԱ Հ.Բունիաթյանի անվան կենսաքիմիայի և ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտների ու ՀՀ ԳԱԱ Գ.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների և ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտների միավորումների վերաբերյալ ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի բյուրոյի դրական դիրքորոշումը, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ կառավարության որդեգրած ռազմավարությունն ուղղված գիտահետազոտական կազմակերպությունների օպտիմալացմանը/խոշորացմանը և ՀՀ ԳԱԱ 2022-2026թթ. զարգացման ռազմավարության «ՀՀ ԳԱԱ համակարգի օպտիմալացում ու գերազանցության կենտրոնների ստեղծում» նպատակակետով նախատեսված միջոցառումները և առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 12-րդ մասով, ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշում է.

1.Նպատակահարմար համարել ՀՀ ԳԱԱ Հ.Բունիաթյանի անվան կենսաքիմիայի և ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտների միավորումը: Միավորման արդյունքում ստեղծվելիք կենտրոնի համար առաջարկել «Մոլեկուլային կենսաբանության և կենսաքիմիայի կենտրոն» նախնական անվանումը:

2.Նպատակահարմար համարել ՀՀ ԳԱԱ Գ.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների և ՀՀ ԳԱԱ Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտների

միավորումը: Միավորման արդյունքում ստեղծվելիք կենտրոնի համար առաջարկել «Բույսերի հետազոտությունների կենտրոն» նախնական անվանումը:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ա.Ս.ՍԱՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.Մ.ԻՇԽԱՆՅԱՆ